

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ուղերձը Հայաստանի Առաջին Հանրապետության տոնի առթիվ

Հարգելի հայրենակիցներ

97 տարիների հեռավորությամբ էլ հայ սերունդները շարունակում են ակնածանքով ու հպարտությամբ հիշել թուրք հրոսակների դեմ Սարգարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում եւ Արեւելյան Հայաստանի այլ վայրերում իրենց հայրերի մղած կենաց- մահու եւ հաղթական հերոսամարտերը, որոնց շնորհիվ միայն ծնունդ առավ հայ ժողովրդի հազարամյա երազանքի մարմնացումը՝ Հայաստանի Հանրապետությունը: Անկախ պետականության նվաճման շնորհիվ միայն մենք ունեցանք Հայաստանի խորհրդային եւ հետխորհրդային հանրապետությունները, Արցախի ազատագրման հնարավորությունը:

Հայաստանի Առաջին Հանրապետության տոնի առթիվ շնորհավորում եմ համայն հայությանը, մաղթում խաղաղ հայրենիք ու ապահով կյանք, առողջություն ու անսպառ հաջողություններ, հաղթական տրամադրություն:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան